ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/12-10 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 07-ը օգոստոսի 2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Ստեփանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **22.05.2023թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-23-9/12-10** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի:**

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***1,577,500 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ընդունման-հանձնման արձանագրությունը ստորագրելուց հետո, համապատասխան եռամսյակներում, առկա ֆինանսական միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան՝ 11.12.2023թ.

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144129 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ ք. Երևան, Արաբկիր 19փ, 6/75: «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 22031196018 2000 ՀՎՀՀ 00152854 տնօրեն Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-9/12-10 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը՝ ոչ ուշ քան 21.12.2023թ.
3.	Փակ ասպիրացիոն համակարգ տրախեոստոմիկ փողի համար	լրակազմ	50	8500	425,000	50
4.	Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար	լրակազմ	100	8500	850,000	100
8.	Դիմակ լարինգեալ /կոկորդային/ N5	հատ	55	5500	302,500	55
Ընդամենը՝					**1,577,500**	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-9/12-10 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի				
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան՝ 11.12.2023թ.
3.	**Անզգայացման գործիքներ բազմակոմպոնենտ/**Փակ ասպիրացիոն համակարգ տրախեոստոմիկ փողի համար	33141225/7	425,000	425,000
4.	**Անզգայացման գործիքներ բազմակոմպոնենտ/**Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար/	33141225/8	850,000	850,000
8.	**Վերակենդանացման դիմակ/**Դիմակ լարինգեալ /կոկորդային/ N5/	33171400/1	302,500	302,500
Ընդամենը			**1,577,500**	**1,577,500**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲԵՂՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՆԱՐԻ-ԱԼԱՆԻԿԱ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ